



ԴԱՎԻԹ ՅԱԿՈԲՅԱՆ

**Շենքերի մատչելիությունը սայլակավոր
հաշմանդամների համար**

Ընդհանուր նորմատիվներ

Ուղեցույց



Մատչելի կամ անարգել միջավայր արտահայտությունները, որպես կանոն, օգտագործվում են այն շենքերի, տրանսպորտային միջոցների և ենթակառուցվածքների նկարագրման համար, որոնցից կարող են ինքնուրույնաբար օգտվել սայլակավոր հաշմանդամները: Մատչելի միջավայրի բաղադրիչներից մեկը ենթադրում է սայլակավոր հաշմանդամների համար անարգել տեղաշարժի իրավունքի ապահովում:

Ընդ որում, այն ինչ հարմար է սայլակավոր հաշմանդամներին, օգտակար է նաև բազմաթիվ այլ մարդկանց համար, որոնք դասվում են սակավաշարժուն խմբերի թվին՝ հենաշարժողական ապարատի խնդիրներ ունեցող մարդիկ, տեսողության խանգարումներով հաշմանդամներ, տարեց և գեր մարդիկ, հղի կանայք, մանկասայլակներով մարդիկ, նախադպրոցական տարիքի երեխաներ և այլն:

Մատչելի միջավայրի ստեղծման համար գոյություն ունեն հստակ նորմատիվներ, որոնք հաշվի են առնում սայլակավոր հաշմանդամի ազատ տեղաշարժման համար անհրաժեշտ բոլոր գործոնները: Սույն ուղեցույցում ներկայացված են այդ նորմատիվները և դրանց հակիրճ մեկնաբանությունները:



«Ունիսոն» հասարակական կազմակերպություն
Հասցե՝ Երևան 0002, Դեմիրճյան 36
Հեռ./Ֆաքս՝ (010) 52-21-70
Էլ. փոստ՝ unison@unison.am
www.unison.am
<http://map.disability.am/>
[facebook.com/unison.am](https://www.facebook.com/unison.am)
[youtube.com/unisonngo](https://www.youtube.com/unisonngo)


© 2015թ. «Ունիսոն» ՀԿ



Սույն հրապարակումն իրականացվել է
Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստանի
ֆինանսական միջոցներով

Թեքահարթակի նորմատիվները



Թեքահարթակի (պանդուսի) կառուցման անհրաժեշտությունը առաջ է գալիս ճանապարհահատվածի ուղիղ մակերևույթի 3 սմ ուղղաձիգ գերազանցման տեղերում (տե՛ս Գծագիր 1):



Գծագիր 1 **Մ 1 : 10**


Թեքահարթակը կառուցելիս անհրաժեշտ թեքությունը որոշվում է ուղղաձիգ գերազանցման չափով: Ելնելով պահանջվող չափանիշներից՝ 20 սմ բարձրությամբ խոչընդոտի դեպքում կարելի է կառուցել 1:10 (10%), իսկ 20 սմ ավելի դեպքում՝ 1:12 (8%) թեքությամբ թեքահարթակ (տե՛ս Գծագիր 2, 3):

Թեքահարթակի թեքման կետերում ուղղաձիգ գերազանցումը պիտի լինի զրոյական: Բացառվում է նույնիսկ 1 սմ-ի չափով գերազանցում (տե՛ս Գծագիր 2, 3):



Թեքահարթակի երկարության և լայնական մասի չափերը պայմանավորված են անվասայլակի առավելագույն չափերով, որոնք ենթադրում են պահանջվող աշխատանքային մակերես և չափեր (տե՛ս Գծագիր 4):


Հետևաբար, թեքահարթակի լայնական մասի չափը պետք է լինի նվազագույնը 90 սմ անվասայլակով մարդու հանգիստ տեղաշարժը ապահովելու համար (տե՛ս Գծագիր 5):



Գծագիր 4 **Մ 1 : 20**


Թեքահարթակի երկարությունը պայմանականորեն բաժանվում է 3 մասի.
 1 - հիմնային մաս, 2 - զառիվեր մաս, 3 - վերին մաս (տե՛ս Գծագիր 5):

Այս կառուցվածքային բաժանումները պայմանավորված են այն հանգամանքով, որ անվասայլակով կարելի է առավելագույնս հաղթահարել 80 սմ բարձրություն, որը հաղթահարելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հետո նորից շարունակել շարժումը: Այս նորմատիվը ապահովում է անվասայլակով մարդու անվտանգ տեղաշարժը թեքահարթակով: Կանգառի տեղում առաջանում են թեքահարթակի վերին և հիմնային մասերը (տե՛ս Գծագիր 5), որոնք նույնպես պահանջում են նվազագույն երկայնական չափեր՝ պայմանավորված անվասայլակի նորմավորված աշխատանքային չափերով (տե՛ս Գծագիր 4):




Գծագիր 5 **Մ 1 : 75**

Կախված իրադրությունից թեքահարթակը կարող է ձգվել ոչ թե մեկ ուղղությամբ, այլ զիջագաձև կամ մեծ շառավղով շրջանագծի աղեղով (տե՛ս Գծագիր 6):
Այստեղ կառուցման չափերը որոշվում են համաձայն վերը նշված նորմատիվների:



Գծագիր 6 $U 1 : 75$



Եթե թեքահարթակը շրջափակված չէ պատերով և ունի մեծ երկարություն, ապա անվասայլակով տեղաշարժվող անձի անվտանգությունը ապահովելու համար, թեքահարթակի լայնական կողային մասերում անհրաժեշտ է նախատեսել մոտ 5 սմ բարձրությամբ եզրաշերտ (տե՛ս Գծագիր 7):

Այն կարող է համատեղվել բազրիքի հետ:

Գծագիր 7 $U 1 : 20$

